ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐՈՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1.

Գիտական կենսագրությունը գրականագիտության և գրականության պատմության կարևոր բնագավառներից է: Գրողի կենսագրությունը ամենահին ու ամենափորձված մեթոդներից է, որը հնարավորություն է ընձեռում հեղինակի երկը դիտել նրա կյանքի, կենսագրության լույսի ներքո՝ հաշվի առնելով գրողի ապրած ժամանակն ու հասարակական միջավայրը, որի ընթացքում և որի մեջ ապրել է ստեղծագործողը:

Գրողի գիտական կենսագրությունը կարևոր նշանակություն ունի գրող-գրական երկ փոխկապակցությունը պատճառահետևանքային սկզբունքով ներկայացնելու առումով, թեև շատ դժվար, երբեմն էլ անհնար է հաշվարկել կենսափաստի և վերջինիս ազդեցությամբ վերացարկված գեղարվեստական փաստի սահմանները, տարանջատել իրականության ազդակն ու արձագանքը գեղարվեստական երկի լինելությունից՝ մատնանշելով առաջիններին ավարտն ու երկրորդի սկիզբը:

Այս բնույթի աշխատանքներում զգալի տեղ է գրավում գրողի ժամանակի և հասարակական կյանքի վերլուծությունը, որովհետև գրական երկը գրողի կենսագրության, նրա հոգևոր փորձի արդյունքն է: Առանց շատ մանրամասների ճշտման անհնար է ավարտուն կարծիք հայտնել գրական ստեղծագործության մասին, չափել նրա բովանդակային տարողությունը: Գեղարվեստական երկերի մտահղացման կենսափաստերի բացահայտումը, նույնիսկ տարեթվերի ճշգրտումը նպաստում է երկի բովանդակության շերտերը բացելուն:

Ստեղծագործության պատմության, լաբորատորիայի՝ սեագրությունից սկսած մինչև ամբողջականը, այսինքն՝ գեղարվեստական գործի «կենսագրության» կապը հեղինակի կենսագրության հետ անհերքելի իրողություն է:

Գրողի աշխատանքի և մտածելակերպի բացահայտումը նույնպես անհնար է՝ առանց նրա կենսագրության լուրջ ուսումնասիրության: Վերջինիս կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ միևնույն պատմական դարաշրջանում, միևնույն ազգին պատկանող, միևնույն պայմաններում ստեղծագործող գրողները, լինելով հումանիզմի և մշակութային առաջադիմության կրողներ, տարբեր են իրենց քաղաքական համոզմունքներով ու հայացքներով: Մշակույթի, քաղաքակրթության համար առանձնապես էական չէ մաթեմատիկոսի, բնագետի կենսագրությունը, որովհետև նրանց գիտական նվաճումներում անհատականությունը, սուբյեկտիվ տարրը տեղ չունի, և նրանց հետազոտություններում չի կարող դրսևորվել ո՛չ հեղինակի ոգևորությունը, ո՛չ նրա համակրանքներն ու հակակրանքները, ցասումն ու բերկրանքը, տանջանքն ու տառապանքը, բոլոր զգացմունքներն ու խոհերը, կրոնական ու քաղաքական հայացքները: Մինչդեռ այդպես չէ գրողների ու արվեստագետների համար, որոնց անհատականությունը որոշակի ազդեցություն է ունենում իրենց իսկ աշխարհայացքի ու մտածելակերպի ձևավորման վրա: Գրողի ստեղծագործությունը միշտ նրա անձի, բնավորության և հայացքների դրսևորումն է, նրա բարոյական նկարագրի հայելին: Հատկապես մեծ քաղաքացի գրողները, ի տարբերություն գիտնականների, եղել են նաև մեծ մարդիկ: Եվ հասարակության վրա ունեցած իրենց ազդեցությամբ նրանք պարտական են ոչ միայն իրենց ընդունակություններին ու տաղանդին, այլև իրենց բնավորությանը, իրենց ազնվական էությանը, հոգեկան հարստությանը: Սակայն ոչ միայն գրողի անձը, բնավորությունը, այլև նրա միջավայրն ու ժամանակն են մեծագույն ազդակ գրականության ճանապարհին: Եվ այն, որ գրականությունը գեղարվեստական փաստի վերածված կյանքն է, նույնպես կարևորում է արվեստագետի կյանքի ուսումնասիրության խնդիրը: Գրողի կենսագրական իրողությունները բազում և բազմաթիվ ազդակներ են հաղորդում նրա ստեղծագործությանը:

Այս հարցերը մշտապես եղել են տարբեր ազգերի գրականագիտական տեսական մտքի ուշադրության կենտրոնում, հատկապես մեր օրերում՝ ստրուկտուրալիստական շրջանից հետո, երբ ստեղծագործության կառուցվածքային վերլուծության ընթացքում գրողի անհատականությունը մնում էր փակագծերում, քսաներորդ դարասկզբից սկսած կարևորվում է գրողի սոցիալական պատկանելությունը, նրա տեղը աշխարհում, հասարակական-քաղաքական հարաբերություններում: Գրել կարելի է միայն որոշակի տարածության և ժամանակի մեջ, որոշակի պայմաններում, որոնք չեն կարող ուղղակի ազդեցություն չունենալ նրա ստեղծած գեղարվեստական աշխարհի վրա: Հենց ժամանակի և միջավայրի ազդեցության խնդրի կարևորությունն է պարտադրում դիմել կենսագրությանը: Այս գրականագիտական ժանրի տեսական, մեթոդաբանական հիմնավորման առումով նշանակալից են Գ. Վինոկուրի, Լ. Գինզբուրգի, Ցու. Լոտմանի, Բարտի, Գ. Լանսոնի, Սենթ Բյուվի, Գ. Բրանդեսի, Ֆրանկ Լեստրենդանի, Ռոժե Պյեռոյի և այլոց աշխատությունները: Գ. Վինոկուրը փաստում է, որ իր համար անհասկանալի կլիներ Գյոթեն, եթե չիմանար նրա մասին իբրև Վեյմարյան նախարարի, որ նույն կերպ չէր հասկանա Լերմոնտովին, եթե չիմանար նրա հավերժ թախծաբեր մենամարտի մասին: Գիտական կենսագրության ուսումնասիրության բնագավառում այսպիսի մոտեցումը Գ. Վինոկուրի սկզբունքների ուղղակի զարգացումն է: Հետևելով գրականագիտության մեջ մշտապես ամրագրված «...որքան լավ գիտենք գրողի կյանքը, այնքան լավ ենք հասկանում նրա ստեղծագործությունը»[1] սկզբունքին՝ միանգամայն վստահ կարելի է ասել, որ եթե չլինեին Էջմիածնում անցկացրած մղձավանջային ամիսները, 1914-1915 թթ. Արևմտյան Հայաստան կատարած ճամփորդությունները, չէին ծնվի Թումանյանի «Հոգեհանգիստն» ու «Հայրենիքիս հետը», իսկ եթե չլսեր դժոխային տեսարանների ականատեսների պատմությունները, չէր գրի «Դժոխքի հանդեպը», այնպես, ինչպես անբուժելի հիվանդության ցնցումները պայմանավորեցին Դոստոևսկու, Դուրյանի, Մեծարենցի հրաշալի շատ երկեր, իսկ Սերվանտեսի տառապալից արկածներով լի կյանքը, մերժված ու չգնահատված տաղանդ լինելու հանգամանքը՝ «Դոն Կիխոտը»: Ցուրաքանչյուր գրողի ծայրահեղ ապրումները պայմանավորված են նրա կյանքի կոնկրետ հանգա-

մանքներով, և աներկբա է, որ դրանք նպաստում են մեծարժեք ստեղծագործությունների երևան գալուն:

Ռուս ականավոր գրականագետ Բորիս Մեյլախի համոզմամբ, Պուշկինի ամբողջական գիտական կենսագրության ստեղծմանը խոչընդոտում է ընդհանուր մեթոդաբանական հարցերի չմշակված լինելը: Ի թիվս այդ չմշակված մեթոդաբանական հարցերի՝ գիտնականը հատկապես նշում և առանձնացնում է նրանք, որոնք կապված են կենսագրական հետազոտությունների և գրողի կենսագրության տեղի որոշման հետ գրականության պատմության մեջ (Տե՛ս՝ **Б. С. Мейлах,** О задачах изучения и принципах построения биографии Пушкина — Доклад на XIII Всесоюзной Пушкинской конференции, стр. 17): *Իր հերթին, այդ տեսական-մեթոդաբանական հարցերի ոչ պատշաճ մակարդակով մշակված լինելու հանգամանքը բացատրվում է նրանով, որ մինչև վերջին ժամանակները գրողի անհատականության ուսումնասիրության խնդիրը թերագնահատվում էր:*

Բ. Մեյլախը ստեղծված իրավիճակը միանգամայն տարօրինակ է համարում այն առումով, որ չնայած նրան, որ առանձին գրողների գիտական կենսագրությունների ստեղծման բավական հաջող փորձեր են արվում և հետաքրքրությունը այդ գրականագիտական ժանրի հանդեպ գնալով աճում է, այնուամենայնիվ արդեն տասնյակ տարիներ լույս չեն տեսնում տեսական աշխատություններ կենսագրության հետազոտման և կառուցման խնդիրների վերաբերյալ: Ու թեև վերջին տարիներին ուշադրությունը խնդրի հանդեպ աճել է, ուժեղացել է, հատկապես գրողի ստեղծագործական անհատականությունն ուսումնասիրելու առումով, սակայն, այնուամենայնիվ, չկան հետազոտություններ կենսագրական աշխատանքների մեթոդաբանության վերաբերյալ, ինչպես նաև այդ բանագավառում արվածը ամփոփող հոդվածներ (Տե՛ս՝ **Б. С. Мейлах,** О задачах изучения и принципах построения биографии Пушкина — Доклад на XIII Всесоюзной Пушкинской конференции, стр. 17): *Ուշագրավ է նաև, որ Բ. Մեյլախը կարևորում է այն, որ գրողի կենսագրության էությունը պետք է բնորոշվի որպես գրականության մասին գիտության ինքնուրույն խնդիր և միաժամանակ որպես գրականագիտական ուսումնասիրությունների ժանր* (Նույն տեղում, էջ 18): *Շարունակելով իր միտքը՝ գիտնականը շա-*

բունակում է. «Սակայն անհրաժեշտ է որոշել, ճշտել կենսագրության սահմանները որպես ժանրի, որը չի կարող փոխարինվել այլ տիպի հետազոտություններով» (Նույն տեղում): *Եվ վերջապես, խոսելով կենսագրության մասին՝ որպես գրականագիտական խնդրի՝ հարկ է ընդգծել, հստակեցնել այն հանգամանքը, որ մեր պատկերացմամբ այն ոչ մի ընդհանուր բան չունի, այսպես կոչված, կենսագրական մեթոդի հետ գրականագիտության մեջ: Կենսագրական մեթոդի հիմնադիր Սենթ Բյուվը և նրա հետևորդները (Լակոմբը, Ռենարը և ուրիշներ) ձևավորում էին գրողի անհատականությունը՝ հենվելով կենցաղային ամենաչնչին ու աննշան մանրամասների և ինտիմ կյանքի վրա: Այդ ուղղության ջատագովները համոզված էին, որ կենսագրության ուսումնասիրությունը եթե ոչ միակ, ապա ամենագլխավոր ուղին է գրողի ստեղծագործության, գաղափարների ու մղումների շարժառիթն ու իմաստն ընկալելու, մեկնաբանելու համար, որ գեղարվեստական ստեղծագործությունն անհնար է հասկանալ, եթե չվերծանել այն իբրև գրողի կյանքի անմիջական, ուղղակի արտացոլում (այդ հասկացության նեղ իմաստով): Ուստի և կենսագրական մեթոդի ներկայացուցիչները ցանկացած կերպարի, քնարական հերոսի մեջ փորձում էին տեսնել իրական անձնավորության գրողի շրջապատում, յուրաքանչյուր քնարական բանաստեղծության մեջ՝ որևէ կենսագրական փաստի կոնկրետ արտահայտություն (Տե՛ս՝* **Б. С. Мейлах,** О задачах изучения и принципах построения биографии Пушкина — Доклад на XIII Всесоюзной Пушкинской конференции, стр. 18):

Հենց այդ կոնկրետ հանգամանքների, ինչպես նաև գրողի և իր ժամանակի, միջավայրի առնչակցությունը ներկայացնելու համար մեծ կարևորություն է ձեռք բերում վավերագրական աղբյուրների հետազոտությունը, որի հետ կապված բազմաթիվ դժվարությունների խնդիրը արծարծվել է դեռևս անցյալ դարի սկզբներին Մ. Գերշենզոնի աշխատություններում[2]*: Այսօր այդ դժվարությունը մասամբ վերացել է, որովհետև մեծ չափերի են հասել գրողների մասին գիտական ուսումնասիրությունները, նրանց նամակների լիակատար ժողովածուների, ինչպես նաև ստեղծագործությունների գիտական հրատարակությունները, նաև բազմաբնույթ փաստաթղթերի ու վավերագրերի հրապարակումը: Միայն այսպիսի*

հրատարակությունների, արխիվային նյութերի ու ժամանակի մամուլի լայնածավալ ուսումնասիրության ընթացքում կարող է ի հայտ գալ գրողի դարաշրջանն ու կյանքը, և դրանց վոխներթափանցումը մեզ համար կդառնա ավելի հասկանալի: Ահա թե ինչու դեռ հեռավոր ժամանակներից գիտնական-մտածողները քաջ գիտեին՝ որքան ուշ գրվի անհատի կենսագրությունը, այնքան նրա կյանքի շատ մանրամասներ կդատապարտվեն անհայտության: Միայն Մաշտոցի աշակերտը կամ նրան շատ մերձավոր մեկը կարող էր գրել «Վարք Մաշտոցին»: Եվ, անշուշտ, օրինաչափ է, որ հայագիր առաջին գրքի հեղինակը Կորյունն է, և եթե փորձեին թեկուզ շատ տաղանդավոր անհատներ նույն գործը անել կես դար հետո, ապա այդ գրքի բովանդակությունը այլ կլիներ, և փաստերը վստահություն չէին ներշնչի:

Պատահական չէ նաև, որ մեր պատմիչներից ոմանք դեռևս վաղ միջնադարում իրենք էին կցում իրենց համառոտ կենսագրական տեղեկությունները պատմություններին: Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» վերջին մասի (վեցերորդ դպրության) ցանկն ավարտվում է այն հավաստմամբ, որ ինքը զետեղում է տասը տուն ոտանավոր՝ իր մասին կենսագրական տեղեկություններով.

«Այս գիրքը կարդացողներիդ համար տասը համարված տուն տեղեկություն իմ մասին» («Հայ մշակույթի նշանավոր գործիչները» (5-18 դարեր), Ե., 1976, էջ 37): Սակայն այս խոստումը, որ տասը տան կամ գլուխների մեջ պետք է իր կենսագրությունը շարադրեր, մնացել է անկատար, կամ էլ գրվել է, բայց մեզ չի հասել: Սակայն այն չի եղել նաև Ղազար Փարպեցուն ծանոթ օրինակում: Ինչևէ, մեր համատեքստում կարևորը ոչ թե այդ կենսագրության գրված կամ չգրված, պահպանված կամ չպահպանված լինելու հանգամանքն է, այլ այն, որ դեռ հինգերորդ դարում գրող-պատմիչը անհրաժեշտ է համարել իր կենսագրության շարադրանքը գրքին կցելը:

Հարցը կարևորվել է նաև ժողովրդական բանահյուսության մեջ, երբ ժողովուրդը ինքն էր ավանդություններ հյուսում գրողների, նշանավոր անձանց կյանքի շուրջ:

Հետագա դարերում, հատկապես վերջին երկու դարերի ընթացքում շատ բան է փոխվել: Բոլոր այն գրողները, որոնցից մեծ քանակի ձեռագրեր ու արխիվ է պահպանվել, կենսագիրը հանդիպում

է գրողի կենցաղային առօրյային և կարողանում է ներկայացնել գրողի կյանքի և ստեղծագործության փոխներթափանցումը, ինչպես վարվել է Միշել Կրուզը Ստենդալի կենսագրությունը գրելիս, Անրի Միտերանը Է. Զոլայի կյանքի մասին գրելիս:

Վավերագրական նյութերի առատությունը թույլ է տալիս ամփոփ ու ամբողջական ձևով ներկայացնել պատմական անհատի բազմակողմանիությունը, ինչը հնարավոր կլինի նաև Հ. Թումանյանի կենսագրությունը շարադրելիս: Այդ նյութերից մեծ չափով օգտվում են նաև գեղարվեստական կենսագրության հեղինակները, որոնք նույնպես ձգտում են կենսագրության միջոցով վերստեղծել թե՛ այդ բազմակողմանիությունը և թե՛ անհատի դարաշրջանն ու պատմական միջավայրը: Սակայն գեղարվեստական կենսագրության որոշ առանձնահատկություններ թերություններ են գիտական կենսագրության համար: Որքան էլ մեծ լինի Անդրե Մորուայի ավանդը կենսագրության ժանրի ասպարեզում, նրա գրած կենսագրությունները որոշ չափով մակերեսային ու ռոմանտիկացված են: Ֆրանսիացի ժամանակակից գրականագետ Ժակ Նեֆի վկայությամբ այսօր Ֆրանսիայում գրողների կենսագրությունների հրատարակության իսկական տարափ է սկսվել: Կենսագրականները դարձել են ամենաընթերցվող գրական ժանրերից: Նաև այս հանգամանքով է պայմանավորված, որ գնալով էլ ավելի կարևոր է դառնում ժամանակի ու միջավայրի հետ միասին գրողի անհատական բնավորության ու հոգեբանության ուսումնասիրությունը, նրա մարդկային նկարագրի առանձնահատկությունները և վերջիններիս հարաբերակցությունը գեղարվեստական իրողություններին: Ահա թե ինչու վերջին տասնամյակների գրականագիտական միտքը մեծ հետաքրքրություն է դրսևորում կենսագրության հանդեպ՝ իբրև անհատի հետազոտության ոլորտի: Գրականագիտությունը որոնում է արվեստագետի հոգեբանական վերլուծության, փիլիսոփայության և գիտաճանաչողական այլ ոլորտների հետ առնչակցության նոր ուղիներ: Խոսքը վերաբերում է ոչ այնքան գրականագիտության սահմանների ընդարձակմանը, որքան մի գիտության լեզվից մեկ այլ գիտության լեզվին կատարած թարգմանությանը: Որոշ կենսագիրներ, չափազանցնելով սուբյեկտիվ տարրը, փորձ են անում գրողին ներկայացնել ոչ թե իբրև ստեղծագործությունների հեղինակ, այլ իբրև սեփական անհատականության

վերստեղծողի, որի համար գեղարվեստական երկը՝ սոսկ ինքնարտահայտման տեսակ է: Սա, իհարկե, չափազանցություն է, բայց բոլոր դեպքերում հոգեբանական վերլուծությունը կատարում է կարևոր, էական դեր: Հետևաբար թե՛ գրականագիտության այլ ոլորտների, թե՛ գիտական կենսագրության խնդիրը գրական երկի լուսաբանմանը ծառայելն է: Եվ գրողի հոգեբանության վերլուծությունը միջոց է, գործիք գրականագիտական վերլուծության: Այս մեթոդի անհրաժեշտությունը զգացվում է հատկապես հեղինակի և նրա տեքստի միջև ձևավորված տարածության խզումը մեկնաբանելիս: Ս. Սենդերովիչի կարծիքով նույնիսկ գիտական կենսագրության մեջ ամենևին պարտադիր չէ ճշգրիտ ժամանակագրության պահպանումը: Կարևոր է գրողի վարքագծի ոճի պահպանումը: Հենց այդպիսի մոտեցումն է թույլ տալիս վերացնելու հեղինակի և նրա տեքստի միջև եղած խզումը, գեղարվեստական տեքստը ներկայացնել իբրև անհատականության դրսևորում և գրող-մարդուն կարդալ իր ստեղծագործության միջոցով:

Ընդհանուր մեթոդաբանական սկզբունքները ամենևին չեն խանգարում հետազոտողի անհատական մոտեցմանը, չեն բացառում գրականագետի սուբյեկտիվությունը, հարցերը քննելու սեփական տեսանկյունն ու անհատական կողմնորոշիչները: Որքան հետազոտող, այնքան մոտեցում: Ավելի հաճախ այդ մոտեցումը թելադրում է ինքը՝ հետազոտության նյութը: Այժմ գրվում են գիտական կենսագրություններ, ինչպես, օրինակ, ռուս ժամանակակից գրականագետ Վ. Տոպորովի աշխատանքներն են, որոնցում նորահայտ նյութերի ու նոր փաստերի հայտնաբերումը չէ արժանիքը, այլ նոր մոտեցումները կյանքի և ստեղծագործության առնչությունները, ներդաշնակությունն ու հակասությունները մեկնաբանելիս: Պատմությունը՝ բեկված մարդու ճակատագրում, ժամանակը իբրև անհատի ձևավորող՝ ահա ուսումնասիրության գլխավոր նպատակը: Այս է կենսագրության ժանրի համար այն գլխավոր գիտական մոտեցումը, որը պիտի վեր պահի հետազոտողին կենցաղագրությունից և առօրեականից:

Հետազոտության նպատակը և նշված գրականագիտական մոտեցումները անհնար է իրականացնել առանց գրողների մասին միֆերի իրողության հաշվառման: Այս խնդրին հաճախ է անդրադարձել Բարտը՝ միշտ ընդգծելով, որ գրողները որքան սովորական

մարդիկ են, նույնքան էլ՝ բացառիկ, քանի որ նրանց ստեղծագործությունները մնալու են սերունդների հիշողության մեջ՝ ապահովելով մահկանացուի անմահությունը: Եվ միշտ էլ այդ սերունդներին հետաքրքիր կլինի, թե ինչպես են այդ գրողները ապրել առօրյա կյանքում, ունեցե՞լ են արդյոք սուր ապրումներ, ուժեղ կրքեր, թե՞ ապրել են խաղաղ ու միապաղաղ կյանքով: Իրոք, հանճարի կյանքը սովորականի և բացառիկի միասնություն է, ինչը իր հերթին հետաքրքրություն է առաջացնում նրանց ապրած ժամանակի և պատմության հանդեպ: Երբեմն վիճելի է դառնում կենսագրության մեջ ստեղծագործությունը որչափ և ինչպես վերլուծելու խնդիրը, քանի որ նաև դրանով է պայմանավորված, թե գրողի կենսագրությանը ծանոթանալուց հետո ընթերցողի մեջ ցանկություն կառաջանա՞ արդյոք ընթերցել կամ վերընթերցել գրողի ստեղծագործությունը, թե՞ ընդհակառակը: Ֆրանկ Լեստիենգանը Ալֆրեդ դե Մյուսեի մասին գրելիս վերականգնել է անցյալը իր բազմակողմանիությամբ՝ տալով 19-րդ դարի վառ ու կենդանի պատկերը: Ռոժե Պյեռոյի գրած Բալզակի կենսագրությունը տալիս է կարևոր փաստեր, որոնք չեն առնչվում գրողի ստեղծագործությանը, դրա համար էլ այն առաջացնում է գրողին կարդալու ցանկություն, իսկ, օրինակ Ջ. Դ. Պեյնտերը Պրուստի կենսագրությունը ներկայացնում է ստեղծագործությանը միահյուսված և, ինչ-որ տեղ խախտելով ստեղծագործության ամբողջականությունը, մարում է հեղինակին վերստին ընթերցելու ցանկությունը: Երբեմն էլ կենսագիրը գրողի կյանքը դարձնում է ինքնարտահայտման ձև: Այսպես, օրինակ, Լոր Ադլերը Մարգերիտ Դյուրասի կենսագրությունը գրելիս ընդգծում է նրա կյանքի թաքնված կողմերը, բազմադիմությունը, բազմանշանակությունը՝ ելնելով նրա ոչ թե ասածից, այլ չասածից, հանելուկայնությունից՝ դրանցում փնտրելով տաղանդի իսկությունը: Չասվածի հիման վրա, ելնելով սեփական ենթադրություններից, երևակայության հենքով գրողի կերպարը ստեղծելն անթույլատրելի է:

2.

Կան գրողներ, որոնց կյանքը, կենսագրությունը նրանց ստեղծագործության լավագույն մեկնաբանությունն է, իսկ գեղարվես-

տական երկերը՝ կյանքի լավագույն արդարացումը: Վ. Բելինսկու խոսքերով, այդպիսի գրողների առջև ժամանակը ծնկի է գալիս: Եվ որքան հարուստ ու բազմակողմանի է գրողի կյանքը՝ լի իրադարձություններով, որքան մեծ է նրա տպավորությունների շրջանակը, նրա տեսանելիության դաշտը, այնքան արժեքավոր է նրա գրականությունը:

Այս առումով առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում Հովհաննես Թումանյանի կենսագրությունը, որովհետև նա պատկանում է այն հանճարեղ արվեստագետների շարքին, որոնց ուժը մարդու և բանաստեղծի միասնության մեջ է, կյանքի ու ստեղծագործության ներդաշնակ միասնության մեջ: Յուրաքանչյուր մեծ գրող արտացոլում է իր պատմության խորհուրդը, դասերն ու ապագայի սպասումները: Սակայն դա թերևս ամենից շատ վերաբերում է Թումանյանին, որովհետև նա դարակազմիկ գրականություն է ստեղծել՝ վերացարկելով իր ժամանակն ու բոլոր ժամանակների մարդուն, հայ գրականություն բերելով գեղարվեստական մտածողության բազմաձալ շերտեր, տարածք ու ավանդույթ: Նա բառի ոգին հաճախ էր գտնում որևէ խոսքի, զրույցի ընթացքում, կամ լսած պատմության, ավանդության մասին խոսելիս: Բանաստեղծը խոստովանում էր, որ զրույցի ընթացքում ստեղծագործում էր: Նա իր բազմաթիվ լեգենդներն ու հեքիաթները, նույնիսկ բանաստեղծությունները գրել է ժողովրդի հետ անմիջական շփումների արդյունքում՝ դառնալով ժողովրդի լեզվամտածողության ու կենսափիլիսոփայության կրողը, նրա աշխարհազգացողության ու իմաստության արտահայտիչը: Թումանյանի երկերում իր լսածի, տեսածի ու ապրածի նշանակությունը գերակշռող է եղել: Բանաստեղծը գիտակցում էր իր պատասխանատվությունը ժամանակի ու ժողովրդի առջև, հասկանում էր, որ այն, ինչ տրված էր իրեն, պարտավորեցնող էր. «Ճոխ պարգև եմ առել վերուստ...»:

Թումանյանի կյանքի տարեգրությունը հայ ժողովրդի կյանքի կենսագրությունն է, որովհետև վիթխարի է նրա դերը բոլոր ասպարեզներում: Ինչպես անհնար է պատկերացնել հայ գրականությունը առանց Թումանյանի, այնպես էլ անհնար է պատկերացնել 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների՝ ամենադաժան ու ողբերգական շրջանի՝ հայ ժողովրդի պատմությունը առանց Թումանյանի: Թումանյանը այն բացառիկ գրողներից է նաև համաշ-

խարհային գրականության մեջ, որոնց կենսագրությունը դառնում է դարաշրջանի կենսագրություն:

Ֆրանսիացի գրականագետ Ժակ Նեֆը խոստովանում է. «Մենք չունենք այնպիսի գրող, որին դարձնենք ազգային խորհրդանիշ»[3]: Մենք վստահ կարող ենք ասել, որ ունենք ազգային խորհրդանիշ-գրող: Թումանյանն է ամենաժողովրդական, ամենաազգային հայ գրողը, առանց նրա անհնար է պատկերացնել մերը՝ հայկականը, ճշմարիտ ազգայինը: Հետևաբար Թումանյանի գիտական կենսագրությունը արժևորվում է և անհրաժեշտություն է թե՛ բանասիրության, թե՛ պատմագիտության և թե՛ ողջ հայ հասարակական մտքի պատմության համար:

Թումանյանի առաջին կենսագիրը եղել է ինքը՝ բանաստեղծը, երբ 18-ամյա տարիքում գրեց «Գործք հարանցը»՝ կամենալով վերստեղծել իր գերդաստանի, նախահայրերի կյանքի պատմությունը: Դա միայն սկիզբն էր՝ սևագիր տարբերակով, լրացման ու մշակման ենթակա: Երբեմն որոշ էջեր ազատ էր թողել՝ հետագայում փաստերը ճշտելու և լրացնելու համար: Այդ կենսագրականը բաժանել էր ենթագլուխների, որոնցում նա իրեն հայտնի փաստերի հիման վրա նախ շարադրում է նախնիների կենսագրությունները (Բարխուդար, Սարգիս, Մեհրաբ, Գևորգ, Հովակիմ և Աբրահամ) և ապա ներկայացնում է «Տերսանց հատկություններից մի քանիսը», «Թումանյան տան անկման գլխավոր պատճառներից մի քանիսը», «Տերսանց մականունները» գլուխները, այնուհետև իր իսկ ձեռքով կազմած տոհմի ճյուղագրությունը: Առաջինը Թումանյանն է պարզել, որ իր գերդաստանը սերում է 10-11 դարերում Տարոնից Լոռի գաղթած Մամիկոնյանների տոհմից[4]: Իր տոհմագրությունը Թումանյանը սկսում է Թումանի ու Գյոգչայի որդի, իր ապուպապի հայր Բարխուդարից, որին և համարում է իր տոհմի նահապետը, այնուհետև անցնում է նրա ժառանգների՝ Մեհրաբի և վերջինիս ժառանգ Հովակիմի կենսագրությանը, հիշատակում է Թումանյանների բոլոր տոհմանունները՝ համապատասխան բացատրություններով ու ստուգաբանություններով[5]:

«Գործք հարանցը» լրացուցիչ վկայությունն է այն մեծ ոգևորության, որ Թումանյանը ապրել է՝ ծանոթանալով իր քաջազուն տոհմի արժանավոր ժառանգների հերոսական նկարագրին: Մեղադրել Թումանյանին իր պապերի քաջագործությունները ուռ-

ճացնելու կամ նրանց անհարկի մեծարելու կողմնակալ վերաբերմունքի մեջ չենք կարող, որովհետև նրանց արիության համբավը շատ վաղուց դուրս էր եկել Լոռու սահմաններից, տարածվել ամենուր, հասել Խաչատուր Աբովյանին: Վերջինս 1826 թ. հուլիսին՝ Թիֆլիսից Էջմիածին վերադառնալիս, մոտ մի ամիս կանգ առնելով Լոռիում, ականատես է եղել ռուս-պարսկական պատերազմական գործողություններին, ծանոթացել Հովակիմի հետ և ստեղծել նրա կերպարը հայ նոր գրականությունը սկզբնավորող իր անմահ վեպում՝ «Վերք Հայաստանիում»՝ չմոռանալով հիշատակել նաև Հովակիմի հարյուրամյա հորը՝ Մեհրաբին: Թումանյանը միշտ այնպիսի ոգևորությամբ է պատմել իր նախնիների քաջագործությունների մասին, որ իր խանդավառությամբ վարակել է մոտիկ ընկեր-բարեկամներին: Ավ. Իսահակյանը իր ձեռքով է կազմել Թումանյանի տոհմացուցակը: Իսկ ինքը՝ Թումանյանը «Քաջերի կյանքից» պատմվածքում կերտել է Մեհրաբի կերպարը:

Իր և իր տոհմի կենսագրությունը գրելու դաղափարը շարունակում է զբաղեցնել Թումանյանին երկար տարիներ: Այսպես «Գործք հարանցից» մոտ 18 տարի անց՝ արդեն 36-ամյա տարիքում, նա վերսկսում է աշխատանքներն այդ ուղղությամբ: Ավելին, «Ինքնակենսագրություն» խորագրով մի փոքր հատված՝ ընտանիքի, Դսեղի և Ջալալօղլու ուսումնառության տարիների մասին հանձնում է տպագրության «Լույս» օրացույց-հանդեսին[6], որտեղ իբրև հավելված տպագրվելուց երկու տարի հետո՝ 1907 թ., այն լույս է տեսնում Ալեքսանդրապոլում՝ Էմ. քահանա Նազարյանցի «Ընտիր հատվածներում»[7]: Իր լիակատար, ամբողջական կենսագրությունը գրելու խնդիրը Թումանյանին հուզել է հատկապես 1910-ական թվականների վերջերից՝ 1919 թ. մինչև 1922 թ.: Մտադրությունը իրականացնելու սկզբունքների, ապագա աշխատանքի կառուցվածքի շուրջ խորհրդակցում է զավակների հետ: Նրանցից Նվարդ և Համլիկ Թումանյանների վկայությամբ այդ ինքնակենսագրությունը պետք է լիներ ծավալուն, երկու հատորով՝ կազմված 10 գլուխներից՝ համապատասխան իր կյանքի շրջանների: 1919 թ. դեկտեմբերի 12-ին Թումանյանը ասել է. «Կենսագրությունս եմ ուզում գրել, մի տասը շրջան երևի լինի: Առաջին շրջանը գյուղի կյանքն է — Դսեղը, ամենագեղեցիկ շրջանն է կյանքիս... և լավ էլ հիշում եմ: Հետագայում ունեցել եմ ավելի

հետաքրքրական շրջաններ, բայց դա կողմնակի մարդու համար, իսկ ինձ համար էն տարիներն էին լավը, հետո էլ Ջալալօղլու երկու-երեք տարին» (Նվարդ Թումանյան, 210):

Պահպանված ինքնակենսագրական գրառումները դարձյալ վերաբերում են բանաստեղծի տոհմի, վաղ մանկության և պատանեկության շրջաններին: Այստեղ ներկայացնում է նահապետական մի ողջ ընտանիքի պատկեր՝ ազգականներով, ծառաներով, իրենց վարք ու բարքով, սովորություններով, վերստին հիշատակում է Հովակիմին, որին ժողովուրդը մեծարել էր «Լոռու ձորերի Աստված» անունով, նրա մասին պատմել ավանդություններ, որոնք ստեղծված էին հայերին լեզգիների հարձակումներից պաշտպանելու մարտերում Հովակիմի տարած հաղթանակների հիման վրա:

Ինքնակենսագրական նոթերում Թումանյանը ուշադրության է արժանացրել Լոռու պատմական հուշարձանները, ժողովրդական ասքերն ու ավանդությունները, հայրենասիրական ոգեշունչ երգերը, հեքիաթներն ու լեգենդները, հայրենի զարմանահրաշ բնությունը՝ դրսևորելով վաղ մանկությունից սկիզբ առած իր անզուսպ հետաքրքրությունը այդ ամենի նկատմամբ: Փոքրիկ Հովհաննեսը ընթերցողին պետք է ներկայանար 2-3 տարեկան հասակից, երբ կարմիր կովը՝ Ծաղիկը, նրան հարու էր տալիս, և նա շնից վախենում ու փախչում էր, մեծանալով եզներ էր արածեցնում ու միշտ անասուններին կորցնում, լսում էր տատի պատմությունները Աղասու մասին, այն տատի, որը թոռներից ամենից շատ Հովհաննեսին էր սիրում, ինչպես հիշում է Թումանյանը «...իմ ախպեր Ռոստոմն էլ էր կարծում, ես էլ, որ ես տատիս տղեն եմ» (ԵԼԺ 8, 421): Նա լսում էր պապի՝ «Առավոտ լուսո» երգի ելևէջները, հիշում մանկական խաղերը (կոճի, քար գցելը), դպրոցում աշակերտական չարաճճիությունները («ձեն պահելը»), հոր՝ սազ նվագելը և նրա համար «ղարաուլ», պահակ կանգնելը, որ կնոջից թաքուն համագյուղացիներին բաժաներ տան բարիքները, հիշում էր համարձակ «լողորդի» իր քաջագործությունները՝ Դեբեդի մեջ խորը գնալը և խեղդվելուց հազիվ փրկվելը, սրտի կսկիծով հիշում էր մորը՝ արտասվելիս, երբ իրեն հեռացնում էին նրանից՝ տանելով Ջալալօղլի («Ես էլ անքուն տեղի մեջ լաց եմ լինում, լաց եմ լինում») (ԵԼԺ 8, 425): Անուն առ անուն հիշում էր շրջապատող բոլոր կենդանիներին, թախծոտ կարոտով արժևորում էր բնության

մեջ ժամերով պառկելը և երկնքի մեջ խորասուզվելը: Այս ամենով հարուստ, հպարտ ու երջանիկ է զգացել մանուկ Հովհաննեսը և արդեն հասուն տարիքում մեզ վստահեցրել. «Իմ մանկությունը անց է կացել մի աստվածային շռայլության մեջ» (ԵԼԺ 8, 427):

Այդ շռայլությունը նյութական չէր, այլ ոգեղեն՝ բնության, մարդկային հարաբերությունների գնդեցկության և անսահման բարության շռայլություն:

Թումանյանի ինքնակենսագրական նոթերում զգալի տեղ են գրավում նաև իր ժամանակակիցների, հարազատների, ընկերների անունները, ակնարկներ ժամանակի դեպքերի և իրադարձությունների մասին, որոնք պարզում են Թումանյան-կենսագրի հիմնական սկզբունքները՝ ներկայացնել անհատի կյանքը՝ միահյուսված իր ժամանակին ու միջավայրին:

Տաղանդավոր մարդկանց նա համարում էր «մի-մի ստեղծագործություն», որոնց ստեղծածին մասնակից են «իրենց հայրենիքները և իրենց շրջապատը»: Հենց արվեստագետի ապրած կյանքն է կերպարանք տալիս նրա ոգևորությանն ու երևակայությանը, բնորոշում նրա տաղանդը և դառնում այդ տաղանդի առանձնահատկությունը: Ահա թե ինչու Թումանյանը կարևորում էր գրական մեծությունների՝ Գյոթեի, Շեքսպիրի կենսագրությունների դերը, կարևորում էր յուրաքանչյուր արվեստագետի դերը մշակույթի պատմության համար:

Երբ դերասանուհի Ազնիվ Հրաչյան, որն արդեն թողել էր բեմը, սակայն թատրոնի կյանքով էր ապրում, ամառանոցում պատմում է Թումանյանին իր կյանքի նշանակալից դրվագները, Թումանյանը պարզապես ստիպում է դերասանուհուն գրի առնել իր կյանքի պատմությունը: Բանաստեղծը Աբաստումանում, չնայած իր ծանրաբեռնվածությանը, իր իսկ ձեռքով գրում է Հրաչյայի հուշերից 11 էջ՝ պարտադրելով, որ Ազնիվ Հրաչյան շարունակի այն: Այդպես Պուշկինն էր ստիպել Շչեպկինին գրել իր հիշողությունները՝ իր իսկ ձեռքով գրելով նրա կենսագրության առաջին տողերը[8]: Ավելի ուշ՝ Բաքվում, երբ Հրաչյան ավարտում է իր կենսագրությունը, վերամշակելով ու փոփոխելով տպագրության է հանձնում՝ հուշերին կցելով ձոն Թումանյանին.

«Ազնիվ բարեկամ,

Դուք խնդրեցիք ու ստիպեցիք, որ գրեմ հիշողություններս: Ա-

ռաջին պահին, ինձ համար՝ շատ դժվար եղավ ձեր խնդիրքը կատարել... մեր թատրոնի պատմության մեկ գլուխը ուրվագծած եղա, թույլ տվեք, որ ձեզի ձոնեմ զայն»[9],– գրում է դերասանուհին 1904 թ.: Եվ երբ այդ հուշերը մաս-մաս տպագրվում են «Անահիտ» հանդեսում, Թումանյանը իր ջերմ վերաբերմունքն է արտահայտում, ողջունում հեղինակին, ի պատասխան որի ստանում է Հրաչյայի արձագանքը՝ գրված 1909 թ. նոյեմբերի 17-ին. «...ապա ես քանի անգամ պետք է շնորհակալ լինեմ ձեզ, այո՛, ձեզ միայն, իմ թանկագին բարեկամ»:

Այնուհետև այդ հիշողությունները վերածվում են գրքի և հեղինակը վերստին այն 1910 թ. փետրվարի 22-ին նվիրում է Թումանյանին՝ «Կրկին ձոնով»:

Դերասանուհու հուշերի մասին ժամանակի մամուլում հրապարակված ցանկացած հաղորդման կամ գրախոսականի մեջ ընդգծվում էր թե՛ Թումանյանի դերը և թե՛ հեղինակի շնորհակալական զգացումները՝ արտահայտված «Նախաբան մի նամակով»[10]:

Թումանյանի խորհրդով՝ «պատվերով» է Աշոտ Աթանասյանի հայրը՝ Տեր-Ղևոնդ քահանան, գրել հուշեր իր ուսուցչի՝ Խաչ. Աբովյանի մասին (ՆԹ, 50):

Կարելի է բերել բազմաթիվ այլ օրինակներ, Թումանյանի գրավոր և բանավոր խոստովանություններ, որոնք տաղանդավոր անհատների, գեղարվեստագետների կենսագրության ուսումնասիրության հանդեպ նրա լուրջ վերաբերմունքի հավաստումն են: Այդ վերաբերմունքն ու լուրջ մոտեցումը փոխանցվել էր նաև նրա ընտանիքի անդամներին: Բանաստեղծի դուստրերից առաջինը Անուշն էր, որ պատմվածքի ժանրում սկսել էր գեղարվեստորեն շարադրել Թումանյանի կենսագրությունը, իսկ եղբայրը՝ Համլիկը, խորհուրդ էր տալիս. «Հայրիկի խոսքերը, որ մեջ ես բերում, աշխատիր ճիշտ լինես և քիչ խոսեցրու հայրիկին, քիչ և զգույշ»[11]:

Թումանյանի մանկության և ուսումնառության տարիների որոշ դրվագներ ներկայացվել են նրա ժամանակակիցների կողմից հենց բանաստեղծի կենդանության օրոք՝ նրա ժողովածուների հրատարակության առիթով հրապարակված գրախոսականներում: Բնորոշ է «Հանդես ամսօրյայում» տպագրված Գրիգոր Բալասանյանի «Հովհաննես Թումանյան» հոդվածը՝ «Ռուսահայ նորագույն բանաստեղծները»[12] ընդհանուր խորագրով, որը սկսվում է

Թումանյանի ծննդավայրի և տոհմի պատմությամբ, մասնավորապես «Լոռու ձորերի Աստված, սարերի արծիվ, անտառների վագր», Թշնամու մեջ ահ ու սարսափ տարածող Հովակիմի մասին Խաչ. Աբովյանի հրացական խոսքերով, որոնք մեջբերվում են «Վերքից»:

Այնուհետև վերլուծելով մինչև 1910 թ. լույս ընծայված Թումանյանի բոլոր ժողովածուները՝ զուգահեռաբար անդրադառնում է նրա կյանքի կարևոր դեպքերին, Ջալալօղլում ուսումնառության շրջանին, ժողովածուների տպագրության գրական արձագանքներին, աշխատակցած թերթերին, օտարազգի գրողների ազդեցություններին, Թումանյանի ստեղծագործության գնահատման շուրջ ծագած համահայկական արձագանքներին՝ հիշատակելով Ս. Մանդինյանի, Ա. Ջոպանյանի, Լեոյի, հայր Բժիկյանի, Ավ. Ահարոնյանի, հայր Պոտուրյանի, Հովհաննես Տեր-Միրաքյանի, Մինաս Բերբերյանի, Ալ. Քալանթարի, Գ. Ենգիբարյանի, Հակոբ Ճաղարբեգյանի և այլոց քննադատական հոդվածները՝ եզրակացնելով, որ «նա իր տեսակի մեջ առաջինն է հանդիսանում»[13]:

Կենսագրության և ստեղծագործության առնչակցության առումով հետաքրքրական է «Ա.» ստորագրությամբ գրախոսականը Թումանյանի 1903 թ. «Բանաստեղծություններ» ժողովածուի մասին՝ զետեղված «Մուրճի» «Քննադատություն և մատենախոսություն» բաժնում:

Ամենայն հավանականությամբ հեղինակը «Մուրճի» խմբագիր Ավ. Արասխանյանն էր, թեև չի կարելի բացառել, որ այդ անվան տակ հանդես է եկել Ավ. Ահարոնյանը: Գրախոսը փորձ է անում գրողի ստեղծագործությունից գնալ դեպի կենսագրություն, գեղարվեստական երկում հայտնաբերել գրող մարդուն, նրա ծննդավայրը, միջավայրը, բնությունը և այն ամենը, որոնցում ապրել են գրողը, նրա «տխուր թե ուրախ ներշնչումները... վշտի, ցնծության արտահայտությունները»[14]:

Այսպես խորհելով՝ հոդվածագիրը՝ եզրակացնում է, որ միայն ստեղծագործության միջոցով «առանց նրա կենսագրությանը մոտիկից ծանոթ լինելու և միայն թերթելով նրա այս հատորը», կարելի է պատկերացնել, թե որտեղ և ինչպես է մեծացել, ինչպիսի կյանք է ունեցել գրքի հեղինակը:

Այսպես 1903-1904 թթ. արդեն փորձ է արվում Թումանյանին տեսնել իր գրվածքների մեջ, իսկ Թումանյանը ինքն է խոստովա-

նել, որ ամեն գրողի ստեղծագործության մեջ գոնե մասամբ ապրում է ինքը՝ գրողը, և իր գրվածքների ուշադիր ընթերցողը այնտեղ կտեսնի նաև իրեն:

Ասենք նաև, որ Թումանյանի կենդանության օրոք նրա մասին կենսագրական ակնարկներ տպվել են ժամանակի ինչպես հայտնի ու անվանի գրողների ու գրականագետների, այնպես էլ պարզապես լրագրողների, ոչ մասնագետ ընթերցողների կողմից: Նկատի ունենք Լեոյի «Ռուսահայ գրականությունը»[15], Վրթ. Փափազյանի «Պատմություն հայոց գրականության»[16], Լ. Մանվելյանի «Ռուսահայ գրականության պատմություն»[17], Փ. Վարդազարյանի «Վշտի ու թախծի երգիչ Հովհ. Թումանյան»[18], Դ. Անանունի «Անցյալի մեծարանք, Հովհ. Թումանյանի քնարը»[19], Պ. Մակինցյանի «Դիմագծեր Հովհ. Թումանյան» (էջ 248-315), Հովհ. Սոլովյանի «Ժամանակակից քնարերգության փիլիսոփայությունը»[20] և Երեմյանի «Ազգային դեմքեր»[21] ուսումնասիրություններում և հոդվածներում տեղ գտած Թումանյանի կենսագրությանը վերաբերող ակնարկները:

20-րդ դարասկզբին Թումանյանի մասին կենսագրական ուրվագծեր արվում էին նաև ռուսերեն: «Современные армянские поэты» ժողովածուում այդպիսի մի ակնարկի հեղինակ էր Ա. Դերվիշը:

Գրողի կենդանության օրոք կենսագրական ակնարկները գրվում էին ամենատարբեր առիթներով՝ թե՛ գրքերի հրապարակության և թե՛ հատկապես Հոբելյանների առիթով: Խոսքը վերաբերում է հատկապես 1919 թ. փետրվարից սկսած մոտ երեք ամիս շարունակ Թումանյանի 50-ամյակի՝ համազգային հնչողություն ստացած հոբելյանի առիթով տպագրված հարյուրավոր հոդվածներին՝ սփռված հայ, ռուս և վրաց պարբերականների էջերում: Այդ օրերին Թումանյանի կյանքի մասին գրելու ցանկությամբ գրողին են հանդիպել Ն. Աղբալյանը, Ս. Գորոդեցկին և Վ. Ահարոնյանը (ՆԹ, 174)[22]:

Նույն աշխուժացումը նկատելի է 1923 թ. բանաստեղծի մահվան առիթով, աշխարհի տարբեր մասերում: Երբեմն էլ այդ հոդվածներին կից ներկայացվում են Թումանյանի մասին քննադատականների և մենագրությունների մատենագիտական ցանկեր, ինչպես օրինակ, Հ. Ս. Կոգյանի «Հովհաննես Թումանյան» հոդվածում[23]:

Բանաստեղծի կյանքի և գործի լուսաբանման համար առանձնահատուկ արժեք ունեն նրա դստեր՝ Նվարդ Թումանյանի բանասիրական պրպտումներն ու հետազոտական աշխատանքները, հատկապես «Հուշեր և զրույցները», որը սկզբնաղբյուրի նշանակություն ունի: Առհասարակ Թումանյանագիտության համար Նվարդի դերը մեծ է և անփոխարինելի: Դեռ ուսանողուհի Նվարդը 1914 թ. հոկտեմբերի 2-ից էքերմանի «Զրույցներ Գյոթեի հետ» գրքի ներշնչումով սկսում է գրի առնել իր հայրիկի զրույցները: Հայտնի է, որ Թումանյանը իր կյանքի վերջին ամիսներին՝ 1923 թ. հունվարին, ծանոթանալով Դոստոևսկու դստեր հուշերին, նկատել է. «Էս գիրքն հենց էսպես և եթե ավելի թույլ էլ լիներ գրված, նույնպես արժեքավոր է և հետաքրքրական, որովհետև աղջիկն է գրում իր հոր մասին» (ՆԹ, 285):

Նվարդի հուշերի արժեքը բանասիրության համար ոչ միայն այն է, որ աղջիկն է գրում, այլև այն, որ գրել է նկարագրած դեպքերից, լսած խոսքերից անմիջապես հետո նույն օրը, նույն ժամերին:

1919 թվականից Նվարդ Թումանյանը ավելի լրջորեն է սկսում զբաղվել Թումանյանի կյանքի ու ստեղծագործության լուսաբանման այդ խնդրով և կազմում է Թումանյանի երկերի առաջին մատենագիտությունը, որից հետո իր ողջ կյանքը անմնացորդ նվիրում է Թումանյանագիտությանը՝ հրապարակելով բազմաթիվ անտիպ էջեր գրողի ժառանգությունից, մասնակցելով մինչև 1957 թ. Թումանյանի գրեթե բոլոր ժողովածուների, այդ թվում գիտական առաջին հրատարակության աշխատանքներին[24], գրելով բազմաթիվ հոդվածներ, ձեռնարկելով և գրեթե ավարտի հասցնելով Թումանյանի կյանքի տարեգրության աշխատանքները, ստեղծելով մինչ 1960-ական թվականները լավագույն ու արժեքավոր կենսագրական ակնարկները Թումանյանի մասին:

Դրանցից առաջինը անստորագիր է և կցված է 1926 թ. լույս տեսած Թումանյանի երկերի հետմահու առաջին ժողովածուին: Դա մինչ այդ գոյություն ունեցող կենսագրականներից ամենաընդարձակն էր: Թումանյանի ամբողջական կենսագրությունը ստեղծելու խնդիրը վերստին օրակարգի հարց է դառնում 1935 թ. դեկտեմբերի 4-ից, երբ Նվարդ Թումանյանը վերադառնում է Թիֆլիսից՝ բերելով իր հայրիկի ձեռագրերը: Շարունակում է ձեռք բերել

հուշեր Թումանյանի մասին, ճշտում է այդ տեքստերի փաստերը, թվագրությունը, ուղղում սխալները, կազմում Թումանյանի կյանքի նշանաձողերը (1869-1923)[25]: 1939 թ. Թումանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ տպագրված կենսագրական ակնարկը ամենահարուստն էր մինչ գրողի 100-ամյակի տոնակատարությունը, իսկ նրա «Թումանյանի մանկությունը և պատանեկությունը» գիրքը[26], որը ներկայացնում է բանաստեղծի կյանքի առաջին շրջանը և դարձյալ ունի սկզբնաղբյուրի նշանակություն: Տասներկու գլուխների բաժանված այս գիրքը գեղարվեստական ակնարկի ձևով գրված կենսագրություն է և ավարտվում է նրանով, որ Թումանյանը աշխատանքի է անցնում Թիֆլիսի հոգևոր կոնսիստորիայում (1887 թ. օգոստոս):

Ինչպես ժամանակին նկատել է գրքի գրախոս Լ. Հախվերդյանը, «Թումանյանի կյանքն ու ստեղծագործությունը ուսումնասիրողներից ոչ ոք, ո՛չ այսօր և ո՛չ էլ հետագայում չի կարող անուշադիր անցնել դրա կողքով» (ՆԹ, 7): Նույն գրքի մասին գրախոսականների մյուս հեղինակները՝ Կ. Քացախյանը, Ի. Եսայանը, Ս. Հարությունյանը ցանկություն են հայտնում տեսնել Թումանյանի կյանքի մասին ամբողջական ուսումնասիրություն, տեսնել գրքի երկրորդ հատորը, որտեղ նույն բարեխղճությամբ բացատրվեր Թումանյանի կյանքի հաջորդ շրջանը, իսկ Հ. Եսայանի «Մեծ կյանքի սկիզբը» հոդվածը հայտարարում էր, որ սեղանին է Թումանյանի մեծ կյանքի «ոչ գլխավոր հատվածը»[27]: Նույնիսկ իր կյանքի վերջին շրջանում, լինելով լուրջ և անբուժելի հիվանդ և գիտակցելով մոտեցող մահվան անխուսափելիությունը, Նվարդը, մոռանալով իր բոլոր մյուս հոգսերը, անվերջ կրկնում էր. «Հայրիկի տարեգրությունը մնաց»[28]:

Նվարդ Թումանյանից և Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակությունից հետո Թումանյանագիտությունը թևակոխեց նոր շրջափուլ՝ մենագրական հետազոտությունների շրջանը: Մինչ այդ՝ Թումանյանի մահից տասնամյակներ անց, նրա ժառանգությանը տրված գնահատականները մնում էին թերթային հոդվածների սահմաններում: Միայն 20-րդ դարի վերջին քառորդում Թումանյանագիտությունը լուրջ զարգացում ապրեց:

1969 թվականից՝ Թումանյանի 100-ամյակի օրերից սկսած, մեկը մյուսի հետևից հրապարակվեցին Ա. Ինճիկյանի, Էդ. Ջրբաշյա-

նի, Լ. Հախվերդյանի, Մ. Մկրյանի, Ս. Աղաբաբյանի, Լ. Կարապետյանի, Հ. Թամրազյանի արժեքավոր հոդվածներն ու ծավալուն աշխատությունները, որոնցում բազմակողմանի քննության ենթարկվեց գրողի հիմնականում գեղարվեստական ժառանգությունը: Ավելի ուշ նրանց հետ մեկտեղ նույն գործը շարունակեց Թումանյանագետների նոր սերունդը՝ հանձինս Զ. Ավետիսյանի, Ա. Եղիազարյանի, Մ. Ջամփոլադյանի և այլոց: Անշուշտ, առանց թերագնահատելու որևէ մեկի վաստակը, անվերապահ կարելի է ասել, որ ամենից մեծ ներդրումը Թումանյանագիտության մեջ կատարեց Էդ. Ջրբաշյանը՝ ոչ միայն իր 4 մեծածավալ արժեքավոր հետազոտություններով, այլև «Թումանյան, ուսումնասիրություններ, հրապարակումներ» մատենաշարի հինգհատորյակով, բանաստեղծի երկերի գիտական հրատարակության տասը հատորյակի աշխատանքները ղեկավարելով: Հիրավի, Թումանյանի ծննդյան օրից սկսած՝ հատկապես 20-րդ դարի վերջին քառորդը եղավ Թումանյանագիտության համար ամենից բեղմնավոր, եռանդուն որոնումների և ձեռքբերումների շրջանը: Սակայն Թումանյանի ստեղծագործության ամենամեծ գիտակն ու դիպուկ բնութագրողը թերևս Ե. Չարենցն էր, որը ապրել ու ստեղծագործել էր ավելի վաղ, բայց հենց նա էր արել Թումանյանագիտության հանճարեղ կռահումները: Ոչ ոք այնպիսի լայն հայացքով չէր ընկալել ու գնահատել Թումանյանին, ինչպես նա: Էդ. Ջրբաշյանի վկայությամբ[29] հենց Թումանյանի ընկալման չարենցյան չգերազանցված բարձունքն էլ հիմք է դարձել Թումանյանագիտության աշխատանքային ծրագրերի, որոնց հիմնական նպատակը հայոց քերթության անհաս Արարատի գնահատումն ու բացահայտումն է[30]: Նաև այս պատճառով բանաստեղծի գիտական կենսագրության ստեղծման խնդիրը դարձավ օրակարգի հարց: Նպաստող հանգամանք էր նաև Թումանյանի 100-ամյակի աննախադեպ տոնակատարությունը: Թումանյանի գիտական կենսագրությունը ստեղծելու առաջին և մինչ օրս վերջին լուրջ փորձը կատարեց Ա. Ինճիկյանը՝ Թումանյանագիտության երախտավորներից մեկը՝ ընթերցողի սեղանին դնելով «Հ. Թումանյան. կյանքը և ստեղծագործության պատմությունը» մենագրությունը: Ինճիկյանի՝ 600 էջ ծավալ ունեցող այդ աշխատությունը Թումանյանի կյանքի ամբողջական պատկերը տալու անդրանիկ փորձն էր, սա-

կայն մնաց անավարտ, որովհետև ընդգրկում է բանաստեղծի կյանքի և գործունեության առաջին երեք տասնամյակը (1869-1899): Վավերագրական հարուստ նյութերի հիման վրա Ինճիկյանը հանգամանորեն լուսաբանում է Թումանյանի տոհմագրությունը, ուսումնասիրության տարիները Ջալալօղլում և Ներսիսյան դպրոցում, կոնսիստորիայի շրջանը, գրական նախափորձերը, միջավայրը, աշխարհայացքը և գեղագիտական դավանանքի ձևավորումը, հոդևոր հարստացման ակունքները, ստեղծագործությունների արձագանքներն ու գնահատականները՝ երկերի ստեղծագործական պատմությունը, դրանց առնչությունը բանաստեղծի ապրած կյանքի հետ: Այսինքն՝ նա կատարել է այդ ժանրի աշխատանքի գլխավոր պահանջը՝ ներկայացնել գրողստեղծագործող անձնության բոլոր դրսևորումները:

Զարմանալի է, բայց այդ լավ սկիզբը չունեցավ շարունակող. ո՛չ ինքը՝ հեղինակը, ո՛չ էլ որևէ այլ գրականագետ: Արդյունքում Թումանյանի կյանքի ամենակարևոր մասը, նրա գրական-հասարակական, ազգային-քաղաքական գործունեության առավել բուռն և հագեցած, հետաքրքիր շրջանը, մարդ և քաղաքացի Թումանյանի կենսագրության հասուն շրջանը, բուն կյանքը մնաց չլուսաբանված: Այս հանգամանքը ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Նախ արխիվային բանասիրական նյութը բավարար չափով ուսումնասիրված, համակարգված և հրատարակված չէր: Հետագա տասնամյակներում լույս տեսան և՛ նյութերի հրապարակումների հինգ, և՛ երկերի գիտական նոր հրատարակության տասը հատորները, որոնք նոր լույս սփռեցին Թումանյանի կյանքի և գործի վրա: Պատճառներից մյուսը խորհրդային կարգերում գաղափարական կաշկանդումներն ու սահմանափակումներն էին, դարաշրջանի լուսաբանման հետ կապված պարտադրվող պահանջները: Եթե Թումանյանի գեղարվեստական ստեղծագործությունը մեկնելիս հնարավոր էր Թումանյանագիտական մտքի ազատ ծավալում, ապա նույնը անհնար էր Թումանյանի կյանքի և ստեղծագործության դրվագները լուսաբանելիս: Հեշտ չէր հաղթահարել գրաքննչական արգելքները և անաչառ ներկայացնել Թումանյանի և դաշնակցական կուսակցության, վերջինիս գործիչների՝ Հ. Քաջազնունու, Ս. Վրացյանի, Անդրանիկի, Լ. Շանթի հետ ունեցած առնչությունները, նրանց միասնական պայքարը ազգա-

յին իդեալների իրականացման համար: Այսօր այդ հնարավորությունն առկա է՝ շնորհիվ ազգային-քաղաքական, մշակութային-մտավոր կյանքի էական փոփոխությունների:

Հավանաբար Թումանյանի գիտական կենսագրության բացակայությունը արդյունք է նաև ամեն մի գրականագետի այն երկյուղի ու անվստահության, որ ծնվում է այդ կարգի մեծությունների մասին գրելիս: Մեծ պատասխանատվությունից ծնվող անհասանելիության զգացումը, իհարկե, կաշկանդում է ուսումնասիրողին: Եվ այնուամենայնիվ այն պետք է ձեռնարկել՝ խորհելով և գիտակցելով, որ կատարյալ ու ամփոփ, ավարտուն աշխատանք ստեղծելն անհնար է, քանզի անհնար է ընդգրկել անընդգրկելին, սպառել անսպառելին: Դրանում համոզված էր նաև ինքը՝ բանաստեղծը. «Ես գիտեմ, մի օր, իհարկե, ոչ շուտ, իմ կյանքը մեծ հետաքրքրություն և աղմուկ է հանելու... Եվ ոչ ոք ուղիղը չի գտնելու, չի ասելու երբեք...»:

Թումանյանի կենսագրության ուսումնասիրությունը ենթադրում է հետազոտական, քննական վիթխարի դաշտ: Այժմ բարենպաստ պայմաններ են ստեղծվել այդ աշխատանքը սկսելու համար: Ամենից արժեքավորը թերևս Թումանյանի երկերի տասը հատորների գիտական հրատարակությունն է՝ հարուստ ծանոթագրություններով, որը ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտի Թումանյանական խմբի տասը և ավելի տարիների գիտահետազոտական կոլեկտիվ աշխատանքի արդյունքն էր՝ Էդ. Ջրբաշյանի հետևողական և խստապահանջ ղեկավարությամբ[31]:

Նպաստող հանգամանքներից մեկն էլ վերջին 30 տարիներում Թումանյանագիտության ասպարեզում կատարված հսկայական աշխատանքներն են թե՛ բանասիրական նյութերի, աղբյուրների հավաքման ու հրապարակման ուղղությամբ և թե՛ բուն Թումանյանագիտական հետազոտությունների ստեղծման ուղղությամբ: Հրապարակի վրա են «Թումանյան, ուսումնասիրություններ, հրապարակումներ» մատենաշարի 5 հատորները: Բազմաթիվ՝ դեռևս չհրապարակված նյութեր են պահպանվում Հայաստանի Հանրապետության և նրանից դուրս գտնվող արխիվներում ու թանգարաններում: Հսկայական նյութ է զետեղված ժամանակի մամուլում: Աներկբա է, որ կենսագրի համար չափազանց կարևոր են ժամանակակիցների հուշերը, որոնցից պահպանվել են մոտ 150-ը, իսկ

«Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ստվարածավալ (1000 էջ) հատորում լույս են տեսել միայն 90-ը:

Որևէ գիտական կենսագրություն անհնար է առանց հուշերի հետազոտման, բայց դա առավել կարևոր է Թումանյանագիտության համար, որովհետև ոչ մի հայ գրողի մասին չի գրվել այդքան շատ հեղինակների ու այդքան մեծ ծավալի հուշեր, որքան Թումանյանի մասին[32], որոնց գրեթե կեսը դեռ գիտական շրջանառության մեջ չեն դրվել և հետազոտության առարկա չեն դարձել: Բարեբախտաբար պահպանված հուշերի զգալի մասը կապվում է Թումանյանի հասուն տարիների հետ, նրա կյանքի առավել քիչ ուսումնասիրված շրջանի հետ: Իհարկե, այդ հուշերից օգտվելիս մենք հաշվի ենք առել, որ դրանց զգալի մասը գրվել է նկարագրվող դեպքերից տասնյակ տարիներ հետո, երբ որոշ չափով կարող էին մթագնվել տեղի ունեցածի շատ մանրամասներ: Եթե նկատի ունենանք նաև հուշագրության ժանրային առանձնահատկությունները՝ պատմողի անխուսափելի սուբյեկտիվությունը, երբեմն դեպքերից ստացած սխալ տպավորությունները և կողմնակալ գնահատականները, ապա հետազոտողին մեծ զգուշություն, փաստերի ու աղբյուրների համադրում է պետք հնարավոր անճշտություններից ու թյուրիմացություններից խուսափելու համար:

Մեծ թիվ են կազմում նաև Թումանյանի ստացած նամակները, որոնց չնչին մասն է միայն հրապարակվել: Դրանք կենդանի պատկերացում են տալիս ժամանակակիցների կողմից Թումանյանի ստեղծագործության և անմիջական ընկալումների մասին: Աղբյուրագիտական մեծ արժեք ունեն նաև Թումանյանի ժամանակակիցների քննադատական գնահատականները բանաստեղծի մասին:

Թումանյանի գիտական կենսագրության ստեղծման ճանապարհին երկրորդ լուրջ ներդրումը Ա. Ինճիկյանից հետո արել է Լուսիկ Կարապետյանը՝ իր բանասիրական լուրջ հետազոտություններով, մասնավորապես «Հովհաննես Թումանյան — հասարակական գործունեությունը, դրվագներ» մենագրությամբ, Հայկազյան և Հայրենակցական միությունների միության, Անդրանիկի, Փ. Վարդազարյանի, Ավ. Ահարոնյանի, դաշնակցական և հնչակյան կուսակցությունների հետ Թումանյանի սերտ կապերի, Էջմիածնում և Թիֆլիսի ազգային բյուրոյում ունեցած նրա գործունեության մասին:

Նվարդից հետո Թումանյանագիտությանը իր նվիրվածությամբ Թումանյանի ժառանգներից աչքի է ընկնում բանաստեղծի թոռնուհին՝ Իրմա Սաֆրազբեկյանը: Նրա ջանքերով 2001 թ. լույս տեսավ նոր մատենագիտություն, որն ընդգրկում է ռուսերենով մամուլում հրատարակված ինչպես Թումանյանի գրած, այնպես էլ նրա մասին ստեղծված հոդվածների ու աշխատությունների մատենագիտական հարուստ ցանկը: Եվ միայն այդ ցանկը ստվարածավալ մի գիրք է կազմում: Նրա շնորհիվ հայ ընթերցողի սեղանին դրվեց «Թումանյանի ընտանիքի նամականին» արժեքավոր գիրքը, որը մի լրացուցիչ անգամ հավաստեց բանաստեղծի ընտանիքի անցած ուղին, որը «Հայ ժողովրդի ճակատագրի մանրանկարն է և, միաժամանակ, դարաշրջանի հասարակական, մշակութային կյանքի ու դեպքերի ժամանակագրությունը»[33]: Եվ ինչպես իրավացիորեն նշում է գրականագետ Ա. Եղիազարյանը, այդ գիրքն իր նախորդնակը չունի հայ (թերևս և ուրիշ) գրականության մեջ[34]:

Այն կարևոր օղակ է Թումանյանի գիտական կենսագրության ստեղծման ճանապարհին, որովհետև հարստացնում է մեր պատկերացումները Թումանյան-մարդու բարոյական նկարագրի մասին՝ ներկայացնելով նրան իբրև հայր, ամուսին, միաժամանակ իր ազգի մեծագույն նվիրյալ, քաղաքացի-բանաստեղծ, դառնալով կենդանի վկայագիր գրողի անհատականության և հայ ազգային կյանքի մի ողջ շրջանի:

Գրապատմական և հոգեբանական այս արժեքավոր վավերագրերի հետազոտությունը հնարավոր է դարձնում Թումանյանի կյանքի նորանոր էջերի և ստեղծագործության բազմակողմանի ուսումնասիրությունը:

Դեռևս 1994 թ. ապրիլի 15-ին ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը «Թումանյանագիտության հերթական խնդիրները» հոդվածում գրում է. «Առաջնահերթ խնդիր է Թումանյանի գիտական (այսինքն՝ ըստ սմենայնի ճշտված և փաստագրված) կենսագրության ստեղծումը, ավելի ճիշտ կլինի ասել՝ ավարտումը»[35]:

Անշուշտ, Էդ. Ջրբաշյանը նկատի ուներ Ինճիկյանի արժեքավոր ուսումնասիրությունը: Կասկածից վեր է, որ Թումանյանի կյանքի երկրորդ կեսը՝ սկսած 1900 թվականից, որտեղ կանգ է առել Թումանյանի առաջին կենսագիրը, շատ ավելի հարուստ է ստեղծագործական և հասարակական կյանքի փաստերով. «Գիտնականը գրել

չհասցրեց,– նշում է Էդ. Զրբաշյանը,– և այդ բացը պետք է լրացվի»[35]:

Ինչ խոսք, Թումանյանը ամենից շատ ուսումնասիրված հայ գրողներից է և մշտապես եղել է հայ գրականագիտության ուշադրության կենտրոնում, սակայն դեռ բազմաթիվ են չլուսաբանված, հետազոտության կարոտ խնդիրները: Խոսքը վերաբերում է հատկապես բանաստեղծի վերջին տարիներին, մասնավորապես Հայաստանի առաջին հանրապետության նկատմամբ Թումանյանի դիրքորոշումներին (1918-1920), նրա մասնակցությանը Հայաստանի և Վրաստանի սահմանային վեճերին, ՀՕԿ-ի գործունեությանը: Վերոհիշյալ թեմաների շուրջ առկա հոդվածներում և հիշատակություններում առայսօր չէին կարող բացահայտվել իրական մոտեցումները զուտ քաղաքական նկատառումներով:

100-ամյա հեռվից նայելով Թումանյանագիտության՝ բանաստեղծին տված գնահատականներին՝ անհնար է գտնել մի մենագրություն կամ հոդված, որտեղ չշեշտվեր հայոց հոգևոր կյանքում Թումանյանի ունեցած բացառիկ, վիթխարի դերը, նրա ամենից ազգային ու ամենից ժողովրդական լինելը: Հայ և օտարազգի գրողները միշտ միակարծիք են եղել Թումանյանին մեծարելիս և միշտ խոստովանել են նրա առավելությունը կյանքի ու արվեստի բոլոր ասպարեզներում՝ համարելով նրան մի գրող, որի պոեզիան հենց ինքը՝ հին ու նոր Հայաստանն է (Վ. Բրյուսով), գրականության մի հսկա (Կ. Զուկովսկի), որի բանաստեղծական աշխարհը ցույց է տալիս՝ որքանով է մեծ իր ազգը (Լ. Օզերով), հայ բանաստեղծական կաճառի ամենապայծառ դեմք (Հ. Հովհաննիսյան), մեր գրի անմահ փառքն ու գոհարակերտ բարձունքը, որից այն կողմ չի անցել մեր թռիչքը, մի տիտան, մի կախարդ (Ավ. Իսահակյան), դարագլուխ, որը բարձրացնում է հայ մշակույթի արժեքը (Դ. Դեմիրճյան), ժողովրդական հոգու իմաստուն ու վսեմ թարգման (Վ. Տերյան), որն իր արվեստով նման է կախարդի (Ս. Զորյան), նաիրյան խոսքի նահապետ, կախարդ, հրաշք, անկրկնելի հանճար, զարմանալի զարմանք (Ե. Չարենց):

Թումանյանի միֆականացումը շարունակվել է հետագա սերունդների, նրա ոչ ժամանակակիցների կողմից: Պ. Սևակի կարծիքով Թումանյանը «անհատականացված ազգ էր, մեր գրականության մեծերի մեծը... Նա կարող էր լինել նաև անանուն, նաև անթվագիր,

ինչպես որ... էպոսները, վարքագրություն-ժամանակագրությունները... Թումանյանը մեր ազգային կոկորդն է, մեր ժողովրդական հագագը, ձայնարանն ու ձայնը միասին, շնչեղությունն ու շունչը մեկտեղ... մեր լավաշ հացը... Թումանյանի ճակատին էր գրված՝ լինել հայ ժողովրդի հետմիջնադարյան պատմության կենսագիրը... դարագլուխ չսկսեց, այլ փակեց»[37]:

Այս վերջին մտքին թերևս չէր համաձայնի նույն այս ժամանակի քննադատ-գրականագետը՝ Զ. Ավետիսյանը, որի խոսքերով Թումանյանը այն մեծերից է, որոնց տաղանդը փիլիսոփայական ժամանակների խոր համադրման արգասիք է, այն մեծն է, այն ֆենոմենը, որը համադրում է բոլոր ժամանակների գեղագիտական նվաճումները և դառնում հավերժական ժամանակի բանաստեղծ[38]:

Ժամանակակից ականավոր ռուս գրականագետ Սերգեյ Բոչարովի համոզմամբ, «Գրողի գիտական կենսագրության ուսումնասիրությունը բանասիրությանը հնարավորություն է ընձեռում արտահայտելու իրեն ոչ թե որպես առանձին և առանձնահատուկ առարկա, այլ որպես գիտությունների և դիտարկելու, ընկալելու միջոցների հանրագիտարան, ընդորում այդ բոլոր միջոցները միավորվում են այն մշտապես արդիական հարցի վրա, թե ինչ է կենսագրությունը»[39]: *Ուշագրավ է, որ ռուս գրականագիտությունը շատ է կարևորում գրողի գիտական կենսագրության ուսումնասիրությունը, գիտակցելով խնդրի լուծման հետ կապված բարդությունները: Շարունակելով ու զարգացնելով իր միտքը՝ Բոչարովը գրում է.* «Թե ինչ է նշանակում կենսագրությունը մշակույթի համար, կարելի է զգալ այն դատարկությունից, որը մենք տեսնում ենք Պուշկինի իսկական կենսագրության բացակայության պատճառով: Դա չլուծված, չիրագործված ազգային խնդիր է»[40]:

Եվ թվում է՝ ամենից առաջ հենց Թումանյանի՝ հայ ժողովրդի պատմության կենսագրի, դարագլուխ բացող ու փակող, հավերժական ժամանակների բանաստեղծի հողեղեն կյանքի պատմությունը պիտի դառնար հետազոտության նյութ: Մինչդեռ չուսումնասիրված են մնում Թումանյանի կյանքին վերաբերող մի շարք այնպիսի կարևոր թեմաներ, ինչպիսիք են Թումանյանը-հրապարակախոս, Թումանյանը-քննադատ ու լրագրող, գիտնական-ուսումնասիրող: Անշուշտ, հետաքրքիր են ոչ միայն Թումանյանի քաղաքացիական գործունեության տարբեր ոլորտները, այլև նրա բարոյա-

գիտական հայացքները, կանխագգացման դերը անձնական կյանքում և ստեղծագործության մեջ, մարդու և բնության, տիեզերքի առնչության փիլիսոփայական խնդիրները:

Այո՛, զարմանալի է, զարմանալի զարմանք, բայց փաստ, որ մինչև օրս Թումանյանագիտության այդ բացը չի լրացվել, երբ այնքան նյութ է ամբարված, որ Հանրագիտարանի խմբագրությունը ձեռնամուխ է եղել Թումանյանի Հանրագիտարանի ստեղծմանը, սկսվել են Թումանյանի կյանքի տարեգրությունը կազմելու աշխատանքները:

Այդ դժվարին կոլեկտիվ ուսումնասիրությունների իրագործման ճանապարհին Թումանյանի գիտական կենսագրությունը կլինի այն կարևոր ազդակը և նշանաձողը, որը կհեշտացնի ու կարագացնի մշակութային այդ երկու գործերի իրականացումը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Г. Винокур,** "Биография и культура", М., 1997, с. 40.
2. **М. Гершензон,** Послесловие к работе Г. Лансона "Метод в истории литературы", М., 1911.
3. "Иностранная литература", М., 2000, #4, էջ 261:
4. Այդ մասին տե՛ս Զաքարեայ Սարկաւագի պատմութիւն, հ. 2, 1870, Վաղարշապատ, էջ 95-98, **Լեո,** Հայոց պատմություն, հ. 2, 1947, էջ 631, 632, **Սմբատ Տեր-Ավետիսյան,** Հովհաննես Թումանյանի տոհմը, «Մշակ», 1919, թիվ 49, **Հակոբ Մանանդյան,** «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. 3, 1952, էջ 160, **Ա. Ինճիկյան,** «Հովհաննես Թումանյան», Ե., 1969, և այլն:
5. Այս մասին հանգամանորեն տե՛ս **Ա. Ինճիկյան,** «Հովհաննես Թումանյան», Ե., 1969, էջ 20-25:
6. «Լույս», օրացույց-հանդես, հավելված, Թիֆլիս, 1905:
7. **Մ. քահանա Նազարյանց,** «Ընտիր հատվածներ» ժողովածու, Ալեքսանդրապոլ, 1907, էջ 265-269:
8. **М. С. Щепкин,** Записки, письма, Современники о М. С. Щепкине, М., 1952, стр. 59, 141.
9. «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 1969, թիվ 2, էջ 33:
10. Տե՛ս Ա. Մ. Եզեկյանի «Տիկին Հրաչեան» հոդվածը, «Մշակ», Թիֆլիս, 1909, նոյեմբերի 14, թիվ 253:
11. **Ի. Սաֆրազբեկյան,** «Թումանյանի ընտանիքի նամականին», Ե., 2002, էջ 139:
12. «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1910, թիվ 1, հունվար, էջ 4:

13. Նույն տեղում, թիվ 4, ապրիլ, էջ 76:
14. «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1904, էջ 169, 173:
15. **Լեո,** «Ռուսահայ գրականությունը», Վենետիկ, 1904, էջ 82-83:
16. **Վրթ. Փափազյան,** «Պատմություն հայոց գրականության», Թիֆլիս, 1910, էջ 558-563:
17. **Լ. Մանվելյան,** «Ռուսահայ գրականության պատմություն», Թիֆլիս, 1913, էջ 77-91:
18. **Փ. Վարդազարյան,** «Վշտի ու թախծի երգիչ Հովհ. Թումանյան», Թիֆլիս, 1908, էջ 72:
19. «Գարուն» ալմանախ, գիրք Բ, Մոսկվա, 1912:
20. **Հովհ. Սոլովյան,** «Ժամանակակից քնարերգության փիլիսոփայությունը», Տփղիս, 1919, էջ 233:
21. **Երեմյան,** «Ազգային դեմքեր», հ. Բ, էջ 19-50:
22. Ս.Գորոդեցկու հոդվածը լույս տեսավ «Закавказское слово» թերթում, 1919 թ. փետրվարի 20-ին. թիվ 27, իսկ Վ. Սիարոնյանի «Հովհաննես Թումանյան, մարդը և բանաստեղծը», Բոսքոն, 1936:
23. «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1923, թիվ 5-6, մայիս-հունիս. էջ 278:
24. Դեռ 1923 թ. հուլիսից Խորհրդային Հայաստանի կառավարության որոշմամբ Ն. Թումանյանը նշանակվել էր Հովհ. Թումանյանի երկերի գիտական հրատարակության պատասխանատու քարտուղար և սկսել էր նախապատրաստական, նյութերի հավաքչական աշխատանքները՝ միաժամանակ ամբարելով Թումանյանի կյանքի ու տարեգրության վերաբերյալ նյութերը:
25. Այս շրջանում Նվարդը շատերի հետ է զրուցում իր ծրագրերի մասին: Հայտնի է 1935 թ. նրա զրույցը Պավլո Տիչինայի հետ մեծ մարդկանց կենսագրությունը գրելու ձևի մասին և լսում նրա խորհուրդները գրողի ազգային-քաղաքական գործունեությունը լուսաբանող փաստերի հրապարակման անհրաժեշտության մասին (Նվարդ Թումանյանի անձնական արխիվ, բաժին 2, թղթ. 17, էջ 101):
26. Նվարդ Թումանյանի «Մանկություն և պատանեկությունը» ունեցել է մի շարք հրատարակություններ (1938, 1946, 1955, 1999):
27. «Սովետական Վրաստան» լրագիր, 1955, օգոստոսի 24, թիվ 200, «Գրական թերթ», Ե., 1955, օգոստոսի 28, թիվ 32, «Սովետական գրականություն» ամսագիր, 1955, թիվ 11, էջ 157:
28. Նվարդ Թումանյանի անձնական արխիվ, բաժին 6/2, թղթ. 2, էջ 18-22 (Արխիվը մեզ է տրամադրել Թումանյանի կրտսեր դուստրը՝ արժանահիշատակ Թամար Թումանյանը):
29. **Էդ. Զրբաշյան,** Թումանյանի գրական ժառանգությունը, Ե., 2000:
30. Թումանյան ասելով՝ Արարատ էին հասկանում ոչ միայն հայերը, այլև վրացիները, որոնք Թիֆլիսի փողոցներում նրան ողջունելիս ասում էին «Привет Арарату!» (Նվարդ Թումանյան, 52):
31. Տե՛ս **Հովհաննես Թումանյան,** Երկերի լիակատար ժողովածու տաս

հատորով, Ե., 1988-1999: Թումանյանի երկերի գիտական առաջին հրատարակությունը տևել էր 19 տարի, երկրորդը՝ 13 տարի:

32. Այդ հուշերի հավաքագրումը սկսվել է դեռևս անցյալ դարի 30-ական թվականներից Ն. Թումանյանի ջանասիրությամբ, իսկ 1935 թ. պաշտոնական բնույթ է ստացել և ղեկավարվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կողմից և հայ բանասիրության տրամադրության տակ եղած հուշերի մի մասը (90-ը) տպագրվել է 1969 թ. (կազմող՝ Լ. Մ. Կարապետյան, խմբագիրներ՝ Ա. Ինճիկյան և Պ. Հակոբյան):
33. **Ի. Սաֆրազբեկյան**, «Թումանյանի ընտանիքի նամականին», Ե., 2002, էջ 5:
34. Նույն տեղում, էջ 6:
35. «Հայաստանի Հանրապետություն» լրագիր, 1994, ապրիլի 15:
36. Նույն տեղում:
37. **Պ. Սևակ**, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, էջ 354, 355, 365, 372, Ե., 1974:
38. **Զ. Ավետիսյան**, «Գրականության տեսություն», Ե., 1998, էջ 190:
39. **С. Г. Бочаров**, Филологические сюжеты, М., Изд-во «Языки славянских культур», 2007, с. 561.
40. Նույն տեղում: